ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Կլիմայի մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[1]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[2]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[3]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[4]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[5]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[6]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Քնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[7]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[8]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[9]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[10]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0) և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[11]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[1]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[2]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[3]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[4]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[5]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[6]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[7]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[8]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[9]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0), «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[10]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0) և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1143[11]-26.08.2025-ՏՏԳԾ-011/0) (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. «Կլիմայի մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածում առաջարկում ենք «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի անվանման հիշատակումից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը, այն է. «*Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:*»:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի անվանման հիշատակմանը, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածում «Կլիմայի մասին» օրենքի հիշատակմանը:

2. Նախածերի փաթեթում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով, հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջը, որի համաձայն. «*Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:*»:

Նույն դիտարկմամբ առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով» բառերը փոխարինել «Ազգային

ժողով» բառերով, իսկ Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասում և 40-րդ հոդվածի 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության վարչապետի» բառերը՝ «վարչապետի» բառով:

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: Առաջարկում ենք սույն պահանջը պահպանել Նախագծի մի շարք հոդվածներում, որտեղ միևնույն միտքը արտահայտելիս օգտագործվում են տարբեր հասկացություններ, մասնավորապես՝ Նախագծում միաժամանակ օգտագործվում են խորհուրդ և կլիմայի փոփոխության հարցերով խորհուրդ, ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն և ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, լիազորված տեսչական մարմին և տեսչական մարմին, հանրային ֆինանսների կատարման լիազոր մարմին և հանային ֆինանսների կառավարման լիազոր պետական մարմին, լիազոր մարմին և Լիազոր մարմին, կլիմայական քաղաքականության իրականացման կարգավորիչ գործիքներ և Կլիմայական քաղաքականության իրականացման կարգավորիչ գործիքակազմ արտահայտությունները՝ արտահայտելով նույն միտքը, ինչը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությանը:

3. Առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը համապատասխանեցնել Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին, քանզի կլիմայական ֆինանսավորման, տեխնոլոգիաների փոխանցման, կարողությունների զարգացման ծրագրերի մշտադիտարկման կարգը, ըստ Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, վերաբերում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիայի, այլ նաև համաձայնագրի իրականացմանը: Ուստի անհրաժեշտ է այս կարգավորումները միմյանց համապատասխանեցնել:

4. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 40-րդ հոդվածի 5-րդ մասում «ենթակետով» բառն առաջարկում ենք փոխարինել «կետով» բառով, քանզի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:»:

5. Նախագծի 18-րդ հոդվածում սահմանված են խորհրդի իրավասությունները: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծով սահմանվում են խորհրդի քննարկմանը

ներկայացվող մի շարք հարցեր, որոնք ներառված չեն խորհրդի իրավասությունները սպառիչ ցանկով թվարկող նորմում: Մասնավորապես՝ Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է լիազոր մարմնի կողմից ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները և դրա իրականացման ծրագիրը խորհրդի քննարկմանը ներկայացնելու լիազորությունը, 2-րդ կետով կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը և միջոցառումների ցանկը, 3-րդ կետով ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը, 4-րդ կետով ազգային, ոլորտային, տարածքային զարգացման ռազմավարություններում և համայնքային զարգացման ծրագրերում կլիմայական քաղաքականության ներկառուցման կարգը, 8-րդ կետով ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման և կադաստրի վարման կարգը, 16-րդ կետով հանրային կլիմայական ծախսերը և ինստիտուցիոնալ զեկույցը և 22-րդ կետով կլիմայական քաղաքականության շրջանակներում իրավական ակտերի նախագծերը խորհրդի քննարկմանը ներկայացնելու լիազորությունները: Եթե Նախագծով լիազոր մարմնին վերապահվում է որոշակի հարցեր ներկայացնել խորհրդի քննարկմանը, ապա այդ հարցերի քննարկման իրավասությունը պետք է արտացոլված լինի խորհրդի իրավասությունները սահմանող նորմում: Հակառակ դեպքում՝ խորհրդի իրավասությունները սահմանող նորմը չպետք է լինի սպառիչ ձևով ներկայացված, որպեսզի հնարավոր լինի ապահովել ներկայացվող հարցերի քննարկման իրավաչափ հիմքը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 18-րդ հոդվածով խորհրդի իրավասությունները սահմանող նորմը:

6. Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առաջարկում ենք «քաղաքականության» բառից հետո լրացնել «նպատակադրումների» բառը՝ Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում սահմանված Կառավարության լիազորությանը և 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում սահմանված լիազոր մարմնի լիազորությանը քննարկվող դրույթը համապատասխանեցնելու նպատակով:

7. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ « (…) Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: (…) »: Նախագծի 25-րդ հոդվածը առաջարկում ենք համապատասխանեցնել այս պահանջին և «ածխածնի» բառը փոխարինել «ջերմոցային գազերի» բառակապակցությամբ, քանզի հոդվածի բովանդակությունը վերաբերում է հենց ջերմոցային գազերի հաշվառմանը և հրապարակմանը:

8. Նախագծի 38-րդ հոդվածում «Հոդված» բառից առաջ գրված «2.» թիվն առաջարկում ենք հանել:

9. Նախագծի 11-րդ գլխի վերնագրում առաջարկում ենք «ԵԶՐԱՓԱԿԻՉ» բառից հետո լրացնել «ՄԱՍ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածում սահմանված հասկացությունը, ինչպես նաև նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը:

Նույն դիտարկմամբ առաջարկում ենք Նախագծի 40-րդ հոդվածի վերնագիրը փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերով:

10. Հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛մ «և», կա՛մ «կամ» շաղկապը, մինչդեռ «և(կամ)» գրելաձևը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել Նախագծերի փաթեթի ամբողջ տեքստում կիրառված «և(կամ)» ձևակերպումները:

11. Նախագծի 40-րդ հոդվածի 8-րդ մասով որպես անցումային դրույթ սահմանված է, որ Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Կառավարության որոշումն ընդունվում է Նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում: Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «*1. Ջերմոցային գազեր արտանետող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պետք է ստանան ջերմոցային գազերի արտանետման թույլտվություն, եթե նրանց կողմից ջերմոցային գազերի արտանետումների կանխատեսվող ծավալը գերազանցում է կառավարության կողմից սահմանված ջերմոցային գազերի արտանետման շեմը.*»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «*2. Ջերմոցային գազերի արտանետման շեմը սահմանվում և ջերմոցային գազերի արտանետման թույլտվության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մթնոլորտային օդի պահպանության մասին օրենսդրությամբ.*»:

Հարկ է նկատել, որ Կառավարության կողմից ջերմոցային գազերի արտանետման շեմը հաստատելու լիազորությունը սահմանված է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ կետում: Նշենք նաև, որ քննարկվող լիազորող նորմի ընդունման նախատեսվող ժամկետը սահմանված է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթով, որը նախատեսում է այլ ժամկետ, քան նախատեսված է Նախագծի 40-րդ հոդվածի 8-րդ մասում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն. «*5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել* ***միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ****, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝*

...

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը.»:

Վերոգրյալի հիման վրա նշենք, որ Նախագծի անցումային դրույթներով ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետ կարող է սահմանվել միայն, եթե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը սահմանված է տվյալ Նախագծով: Ուստի առաջարկում ենք վերանայել Նախագծի 40-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված անցումային դրույթը՝ հաշվի առնելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասը:

12. Նախագծի 40-րդ հոդվածի 9-րդ մասում և «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածում առաջարկում ենք, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանումը, Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտը հիշատակելիս օգտագործել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը:

13. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի

նախագծի վերնագրերից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

14. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում կատարել լրացում և «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի կարգավորման առարկա նախատեսել նաև ջերմոցային գազերի արտանետման թույլտվությունների հետ կապված հարաբերությունները: Գտնում ենք, որ նման լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանզի «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետով մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, որպես օրենքի կարգավորման առարկա նախատեսելով, արդեն իսկ տրամաբանորեն ընդգրկում է ջերմոցային գազերի արտանետման թույլտվությունների հետ կապված հարաբերությունները և լրացուցիչ նախատեսման անհրաժեշտությունը բացակայում է:

15. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում նոր լրացվող 9.3-րդ մասի 1-ին մասի 1-ին կետի ջերմոցային գազերի արտանետման թույլտվության հայտի մերժան հիմք է այն հանգամանքը, երբ հայտը չի բավարարում «սույն օրենքի 9.2 հոդվածի 2-րդ մասի պահանջներին»: Միաժամանակ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում նոր լրացվող 9.2-րդ մասի 2-րդ մասով նախատեսվում են միայն այն անհրաժեշտ տվյալները, որոնք իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվում են լիազոր մարմին թույլտվություն ստանալու համար: Վերջիններիս թերի լինելու հիմքով մերժումը նախատեսվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում նոր լրացվող 9.3-րդ մասի 1-ին մասի 2-րդ կետով:

Առաջարկում ենք «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում նոր լրացվող 9.3-րդ մասի 1-ին մասի 1-ին կետում որպես մերժման հիմք նախատեսել սուբյեկի կողմից ներկայացված տվյալների անհամապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված նորմատիվներին՝ ապահովել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում նոր լրացվող 9.3-րդ մասի տրամաբանական կապը այլ կարգավորումների հետ: Հակառակ պարագայում յուրաքանչյուր անգամ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում նոր լրացվող 9.2-րդ մասի 2-րդ մասով նախատեսված անհրաժեշտ տվյալներ ներկայացնելու դեպքում լիազոր մարմինը պարտավոր է լինելու բավարարել հայտը՝ չունենալով այն մերժելու հիմք, եթե գտնում է, որ ներկայված տվյալների հիման վրա թույլտվության տրամադրումը աննպատակահարմար է:

16. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող 201.6-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «նախազգուշացման հայտնում» բառերը փոխարինել «նախազգուշացում» բառով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում սահմանված եզրույթին և կիրառման ձևին համապատասխանեցնելու նպատակով:

Նույն դիտարկմամբ առաջարկում ենք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող 201.6-րդ հոդվածի 2-րդ մասում «նախազգուշացման հայտնումից» բառերը փոխարինել «նախազգուշացումից» բառով:

17. «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 2-րդ կետով

մարզպետին շրջակա միջավայրի պահպանության բնագավառում վերապահվում է ապահովել մարզում Կառավարության կլիմայական քաղաքականության իրականացումը և համակարգումը: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում որպես մարզպետի լիազորություն սահմանված է Կառավարության կլիմայական քաղաքականության միայն իրականացման ապահովումը մարզի տարածքում: Ուստի առաջարկում ենք «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 2-րդ կետում սահմանվող մարզպետի լիազորությունը համապատասխանեցնել Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված լիազորությանը՝ Նախագծերի փաթեթով սահմանված նախագծերի համապատասխանությունը միմյանց ապահովելու նպատակով:

18. «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 3-րդ կետով սահմանվում է մարզպետի՝ «Կլիմայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների կատարումն ապահովելու լիազորությունը:

Նախագծի 27-րդ հոդվածի 4-րդ մասում հղում է կատարվում նույն հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտներին, որոնք պարտավոր են լիազոր մարմնին տրամադրել անհրաժեշտ տվյալներ ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման և կադաստրի վարման նպատակով: Հարկ ենք համարում նշել, որ տարածքային կառավարման մարմինները նախատեսված չեն ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման և կադաստրի վարման նպատակով լիազոր մարմնին անհրաժեշտ տվյալներ տրամադրելու պարտականություն ունեցող սուբյեկտների շարքում: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 3-րդ կետում Նախագծի 27-րդ հոդվածի 4-րդ մասին կատարված հղումը:

19. «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «պարբերությունում» բառը փոխարինել «ենթակետում» բառով, իսկ 2-րդ մասում «պարբերությամբ» բառը փոխարինել «ենթակետով» բառով: Սույն առաջարկները բխում են

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթից, որի համաձայն. «*Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:*»:

20. «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը, որի համաձայն. «*Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:*»:

21. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք նշել, որ լրացումը նախատեսվում է կատարել միայն առաջին «զարգացման,» բառից հետո, քանզի հիշատակվող հոդվածի 1-ին մասում առկա է երկու «զարգացման,» բառ և կարող է առաջանալ շփոթ:

22. «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-3-րդ հոդվածներով նախատեսվող փոփոխությունները հաշվի առնելով՝ առաջարկում ենք «Կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «բնապահպանական» բառը ևս փոխարինել «էկոլոգիական» բառով, որպեսզի չառաջանա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման վտանգ:

23. «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով կատարվում է միայն լրացում:

24. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը, քանզի նշված նախագծում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:

25. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսվում է պաշտոնական

հրապարակմանը հաջորդող օրը: Ցանկանում ենք նշել, որ սույն օրենքի նախագծի կարգավորումները փոխկապակցված են «Կլիմայի մասին» օրենքի նախագծի կարգավորումներին, որի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսվում է պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներերդ օրը: Սույն դիտարկումը հաշվի առելով առաջարկում ենք «Կառավարության կառոցվածքի և գործունեության մասին» օրենքի նախագծի և համանման կարգավորում նախատեսող Նախագծերի փաթեթում ներառված մյուս օրենքի նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայել և համապատասխանեցնել «Կլիմայի մասին» օրենքի նախագծի կարգավորմանը:

26. Միաժամանակ նշենք, որ Նախագծերի փաթեթում առկա են մի շարք վրիպակներ, ինչպես օրինակ Նախագծի 38-րդ հոդվածի 1-ին մասում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի անունը հիշատակելիս փոքրատառ շարադրելը, շարադասական սխալներ, դասական թվականների գրության սխալներ, ինչպես օրինակ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-7-րդ հոդվածներում, որոնք շտկման կարիք ունեն:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված իրավակարգավորումների համապատասխանությունը միմյանց, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարողներ՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),
Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)

16.09.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարողներ՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),
Գ. Մուրադյան (հեռ.՝ 011-513-248)
16.09.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծերի փաթեթով (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) առաջարկվում է սահմանել կլիմայական քաղաքականության շրջանակը, կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում պետական, տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը, կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի կարգավիճակը, կլիմայական ֆինանսավորման մեխանիզմները, կլիմայական քաղաքականության կարգավորիչ գործիքները, չափումները, հաշվետվողականությունը և հավաստագրումը, կլիմայական քաղաքականության իրականացման շրջանակներում միջազգային համագործակցությունը, կլիմայական տեղեկատվության հրապարակայնությունը և մատչելիությունը, կլիմայական գիտությունների ոլորտում

կրթությունը և գիտությունը, ինչպես նաև պատասխանատվությունը կլիմայական օրենսդրությունը խախտելու համար:

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
(հեռ.՝ 011 513-668)
05.09.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Կառավարության կողմից ներկայացվել է «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը, ինչպես նաև մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ):

Նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է՝

- հստակ սահմանված կլիմայական նպատակներ և ոլորտային զարգացման քաղաքականություններում ներկառուցված կլիմայական նկատառումներ,
- պատշաճ սպասարկվող միջազգային հանձնառություններ,
- կլիմայական քաղաքականության ռազմավարական շրջանակ,
- իրավասությունների և պարտականությունների շրջանակ,

- ներդրված նորարարական ֆինանսավորման մեխանիզմներ,
- ջերմոցային գազերի արտանետումների, ստացված աջակցության և քաղաքականության իրականացման արդյունքների հաշվառման ինստիտուցիոնալ համակարգ:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ կցանկանայինք ներկայացնել հետևյալ նկատառումներն ու առաջարկությունները.

1. «Կլիմայի մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նաև Նախագիծ) 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.
   «Յուրաքանչյուր հաջորդ շրջափուլում ազգային մակարդակով սահմանված հանձնառություններում ամրագրված թիրախները պետք է արտահայտեն ավելի բարձր հավակնություններ».

«ավելի բարձր հավակնություններ» արտահայտությունը կարող է հայեցողական մեկնաբանման առիթ հանդիսանալ:

2. Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն. «Կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում լիազոր մարմնի լիազորություններն են՝
   16) հանրային կլիմայական ծախսերի և ինստիտուցիոնալ զեկույցի մշակումն ու խորհրդի քննարկմանը ներկայացնելը».

- Առաջարկում ենք նշել, թե ի՞նչ պարբերականությամբ պետք է ներկայացվի վերոնշյալ զեկույցը խորհրդի քննարկմանը:

3. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.«Համայնքները բյուջեի կլիմայական նշագրում իրականացնում են կամավորության սկզբունքով».
   Նախագծերին կից ներկայացված հիմնավորման մեջ չի նշվում համայնքների կողմից բյուջեի կլիմայական նշագրումը կամավորության սկզբունքով իրականացնելու որևէ պատճառ.
4. Նախագծի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.
   «Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվելիք, ինչպես նաև արտաքին և ներքին այլ աղբյուրներից ստացվելիք վարկային և դրամաշնորհային, այդ թվում՝

տեխնիկական աջակցության, միջոցների, ինչպես նաև այլ փոխառությունների հաշվին իրականացվելիք ծրագրային նախաձեռնությունները ներկայացվում են խորհրդի քննարկմանը»:

Առաջարկում ենք նշել, թե ում կողմից և ինչ կարգով են վերոնշյալ ծրագրային նախաձեռնությունները ներկայացվում խորհրդի քննարկմանը:

5. Նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ մասում կիրառվում է «գործընկեր կազմակերպությունների կողմից» արտահայտությունը, ինչի կապակցությամբ առաջարկում ենք Նախագծում սահմանել, թե ո՞ր կազմակերպություններն են Նախագծի իմաստով հանդիսանում «գործընկեր կազմակերպություններ».
6. Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Չափումների, հաշվետվողականության և հավաստագրման համակարգում ներառվող տվյալների և հաշվետվությունների որակի վավերացումը (վալիդացումը) և որակի ստուգումը (վերիֆիկացումը) իրականացնում են հավատարմագրված ֆիզիկական և իրավաբանական անձինք».

   Վերոնշյալի կապակցությամբ առաջարկում ենք հղում կատարել համապատասխան նորմատիվ իրավական ակտին, որով սահմանվում են/սահմանվելու են որակի վավերացում (վալիդացում) և որակի ստուգում (վերիֆիկացում) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, գործառույթները:

Եզրահանգում

Հաշվի առնելով վերոնշյալ նկատառումներն ու առաջարկությունները՝ կարծում ենք, որ «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի:

Նախագծերի փաթեթում ներառված այլ օրենքների նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հեռ. /011/ 513 235 /Ներք. 1618/

16.09.2025թ.